ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2026 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ

2026

«Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության» ծրագիր

Ծրագրի շրջանակներում 2026 թվականի առաջին կիսամյակում իրականացվել է ընդհանուր 3911 ժամ դասընթաց: Մասնակցել է 233 անձ՝ 25 խումբ:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ (ՄՈԴՈՒԼՆԵՐ)

- «Կարուձև»
- «Վարսահարդարում»
- «Առողջ ապրելակերպ»
- «Զարգացնող դասընթաց» (Ինքնաճանաչում, անձնային աճ, Համակարգչային հմտություններ, Անգլերենով հաղորդակցման հմտություններ)
- «Զարգացնող դասընթաց» (Ընդհանուր հոգեբանություն, Համակարգչային հմտություններ, Ազգագրություն)
- «Զարգացնող դասընթաց» (Անգլերենով հաղորդակցման հմտություններ, Համակարգչային հմտություններ)
- «Կաշեգործություն»
- «Եռակցում»
- «Կահույքագործության հմտություններ»
- «Շախմատ»
- «Դերասանական արվեստի հիմունքներ»
- «Հայերենով հաղորդակցման նախնական կաղորություններ»
- «Ընդհանհուր հոգեբանություն»
- «Խեցեգործություն»

2026 թվականի առաջին կիսամյակի պլանային և փաստացի ցուցանիշներ

	2026 թվականի ցուցանիշներ		
	Կիսամյակային պլանային ցուցանիշ	Կիսամյակային փաստացի ցուցանիշ	Տարբերություն
Գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերում ընդգրկված իրավախախտում կատարած անձանց թիվը	90	199*	+109
կանայք, տոկոս	-	13	-
տղամարդիկ, տոկոս	-	87	-
Դասընթացում ընդգրկված առարկայական ծրագրերի թիվը	5	14*	+9
Դասավանդվող մասնագիտական խմբերի թիվը	15	25*	+10
Դասընթացների տևողությունը, ակադեմիական ժամ	3600	3911*	+311
Տարեկան հաստատված ծրագրերին մասնակցած և հավաստագրեր ստացած ունկնդիրների տեսակարար կշիռը մասնակիցների ընդհանուր թվաքանակի մեջ, տոկոս	-	67	-

*ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

«Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» ծրագիր



2025-2026 ուսումնական տարվա դասարանների թիվն ըստ ՔԿՀ-ների



	2025-2026
Վանաձոր	2
Նուբարաշեն	2
Սևան	3
Աբովյան	1
Արթիկ	2
Արմավիր	3

2026 թվականին բաշխված հիմնական կրթության վկայականների և միջնակարգ կրթության ատեստաների քանակական ցուցանիշներ (համեմատական)



	2026-ի 1-ին քննաշրջան	2026-ի 2-րդ քննաշրջան
Վկայական	8	6
Ատեստատ	5	9

Վկայական Ատեստատ

«Մինչև 19 տարեկան ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագիր» ծրագիր (2025-2026 ուսումնական տարի, 2026 թվականի առաջին կիսամյակ)



Ներկա պահին

12 սովորող

«Աբովյան» Ք

Կիսամյակի ընթացքում սովորել է 26 անձ

1 սովորող 9-րդ դաս.

3 սովորող 10-րդ դաս.

5 սովորող 11-րդ դաս.

3 սովորող 12-րդ դաս

Հատուկ ուսուցում և գործնական հրաձգության դասընթաց

181	Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության ծառայողների հատուկ ուսուցում
174	Դատական կարգադիրչների հատուկ ուսուցում
303	Քրեակատարողական ծառայության հանրային ծառայողների հատուկ ուսուցում
16	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հանրային ծառայողների հատուկ ուսուցում
18	Գործնական հրաձգության և զենքի անվտանգ կիրառման դասընթաց
44	Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) հատուկ ուսուցում

Պլանային վերապատրաստում



Կազմակերպվել է Անչափահասների արդարադատության խորհրդի հերթական նիստը

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Կանանի» սոցիալ-հոգեբանական կենտրոն» հասարակական կազմակերպության միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

Ռաուլ Վալենբերգ մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հետ համատեղ իրականացվել է մեկօրյա դասընթաց՝ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի արդյունավետ միջոցների կիրառման թեմայով:

«Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության հետագա ամրապնում» ծրագրի շրջանակներում՝ եվրոպայի խորհրդի ֆինասավորմանբ **ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ-ում բացվել է «Զոդման» արտադրամաս**:

«Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության հետագա ամրապնում» ծրագրի շրջանակներում՝ եվրոպայի խորհրդի ֆինասավորմանբ **ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ում բացվել է «Զոդման» ուսումնաարտադրական կենտրոնը**:

Ծրագրի նպատակն է ապահովել ազատազրկված անձանց աշխատանքային զբաղվածությունը, նպաստել նոր մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը և աջակցել վերասոցիալականացման գործընթացին:

«Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության հետագա ամրապնում» ծրագրի շրջանակներում՝ եվրոպայի խորհրդի ֆինասավորմանբ **«Արթիկ» ՔԿՀ-ում բացվել է «Մետաղապլաստե դուռ-լուսամուտների պատրաստման» ուսումնաարտադրական կենտրոնը**:

Ավարտվել է Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի հետ համագործակցության շրջանակում իրականացվող «Բռնի վարքի նվազեցում» ծրագիրը:

Ծրագրին մասնակցել է 27 մասնագետ, որոնցից 26-ը հաջողությամբ ավարտել է դասընթացը և ստացել վկայական:

Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի հետ համատեղ իրականացվել է **«Անչափահասների շրջանում թմրանյութերի և հոգեներգործուն նյութերի գործածման կանխարգելում և ռեաբիլիտացիա»** թեմայով՝ բազմամասնագիտական խմբով վերապատրաստումներ:

Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի և «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ մեկնարկել է «Երեխաների պաշտպանություն, ուսուցիչների և անչափահասների կարողությունների զարգացում՝ առցանց սեռական բռնության և ռիսկային վարքագծի կանխարգելման ու հաղթահարման նպատակով» խորագրով ծրագիրը:

Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի և «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է **«Երեխայի նկատմամբ բռնության կանխարգելում և արդյունավետ պաշտպանություն»** ծրագիրը:

Ծրագրում ներգրավվել է **17 դպրոց՝ ավելի քան 500 աշակերտ**, ովքեր ստացել են ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև գործնական հմտություններ: Ծրագիրը կրում է շարունակական բնույթ:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կազմակերպվել է տոնական միջոցառում երեխաների համար:

Միջոցառումն իրականացվել է «Ընտանիք և համայնք» հասարակական կազմակերպության, «Փալանչո» տիկնիկային թատրոնի և ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ-ի հետ համագործակցությամբ և «Զանգակ» գրատան աջակցությամբ:

Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի հետ համատեղ իրականացվել է քրեակատարողական ծառայողների վերապատրաստման դասընթաց՝ **«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարը և զոհերի իրավունքների պաշտպանությունը քրեակատարողական համակարգում»** թեմայով:

Դասընթացը կազմակերպվել է Ռաուլ Վալլենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի աջակցությամբ:

Իրականացվել է **«Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողություններին ներգրավվող որակավորված հոգեբանների վերապատրաստման»** ծրագիրը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվել է **«Բուլինգի կանխարգելում. բուլինգը որպես սոցիալական խնդիր և սոցիալականացման խոչընդոտ»** թեմայով եռօրյա վերապատրաստում: Դասընթացն իրականացվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող կազմակերպությունների մասնագետների համար

Գիտահետազոտական և հրատարակչական գործունեության շրջանակներում տպագրվել է «Արդարադատություն» գիտական պարբերականի հերթական երկու համար